

Բ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
F O L K L O R E   S T U D I E S  
Ф О Л Ь К Л О Р И С Т И К А

ՀՏԴ՝ 81՝1

DOI: 10.52971/18294316-2023.26.1-75

«ՏՂԱ ԴԱՎԹԻ ԵՎ ԱՂՋԻԿ ԽԱՆԴՈՒԹԻ ՀԵՔԻԱԹԻ»  
ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

*Ռոզա Պ. Հովհաննիսյան*

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

**Ամփոփում**

*Նախաբան.* Հոդվածում անդրադարձել ենք էպոսի միապատում ճյուղերից մեկի՝ «Տղա Դավիթի և աղջիկ Խանդութի հեքիաթի» լեզվի և ոճի քննությանը, ժողովրդական աշխարհընկալման ու լեզվամտածողության, խոսքային ասույթի (դարձվածային միավորներ, մաղթանքներ, օրհնանքներ ու անեծքներ, երդումներ) ձևավորմանը, պատկերավորման համակարգի մի քանի առանձնահատկությունների: Պատումի բնօրինակը[4], որը պատմել է Թադևոս առաքյալի վանքի գյուղացի Դավիթը, և գրի է առել Խաչիկ վրդ. Դադյանը, լույս է տեսել ակադեմիական հրատարակությամբ: Քննվող պատումն առաջին անգամ տպվել է 1895 թ. «Արարատ» ամսագրի նոյեմբերի և դեկտեմբերի համարներում [3]: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև մասնագիտական գրականության ու աղբյուրների համադրության ու վերլուծության մեթոդները: *Վերլուծություն.* Էպոսի միապատում ճյուղի լեզվաոճական քննությունը վկայում է մեր ժողովրդի բանավոր լեզվամտածողության ու երևակայության, ազգային հոգեկերտվածքի ու բնավորության միասնականությունը: *Արդյունքները.* Մերօրյա մարտահրավերների համապատկերում էպիկական պատումների լեզվաոճական քննությունը, մասնավորապես՝ առանցքային բանաձևերի մեկնաբանությունը, անշուշտ, ունի արդիական նշանակություն, քանի որ թույլ է տալիս հասկանալ հայի ինքնության ծածկագիրը, ճանաչելի դարձնել ազգային էպոսի ուղերձներն ու արժեհամակարգը: 2012 թ. լույս տեսավ էպոսի միաճյուղ պատումներից մեկը՝ բարբառային նոր տարբերակով[6], որի փոխադրումը Վանա բարբառից Կարնո բարբառի Գյումրու ենթախոսվածքի և գրչագրումը մենք ենք կատարել /-Ռ.Հ./, իսկ այս հոդվածում անդրադարձել ենք լեզվի և ոճի քննությանն ու բանարվեստի առանձնահատկություններին:

Բանալի բառեր՝ *պատում, էպոս, հեքիաթ, լեզվաոճական քննություն, Գարնա բարբառ, բանաձևային ասույթ, օրհնանք, բարենաղթանք, երդում:*

Ինչպես հղել՝ Հովհաննիսյան Ռ., «Տղա Դավիթի և Խանդութ խանումի հեքիաթի» լեզվաոճական քննություն // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2023: Ն. 1(26): 75-85 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-75

## LINGUO-STYLISTIC ANALYSIS OF "THE TALE OF DAVIT THE LAD AND KHANDOOT THE LASS"

*Roza P. Hovhannisyana*

The Shirak Centre for Armenological Studies of NAS, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** The article considers the analysis of the language and style of one of the branches of the epic "The Tale of Davit the Lad and Khandoot the Lass", the formation of popular worldview and way of thinking, verbal utterance (phraseological units, wishes, blessings, curses, oaths), as well as several features of the imagery system. The original of the story, told by Davit, a peasant from the Apostle Thadeus Monastery and recorded by Khachik vardapet Dadyan, was printed as an academic publication in 1895 in the November and December issues of the "Ararat" magazine[3]. **Methods and Materials:** Historical-comparative, as well as methods of combination and analysis of expert literature and sources were used in this work. **Analysis:** The linguistic and stylistic analysis of this single branch of the epic testifies to the unity of our people's oral language thinking and imagination, national psyche/mentality/ and character. **Results:** In the context of today's challenges, the linguistic and stylistic analysis of the epic narratives, in particular, the interpretation of key formulas, certainly has a modern significance, because it enables to understand the code of the Armenian identity and make the messages and value system of the national epic recognizable. In 2012, one of the narratives of the epic was published in a new dialectal version, whose arrangement from the Vana dialect to the Gyumri accent of the Karno dialect has been penned by us /-R.H./.

**Key words:** *narrative, epic, tale, linguo-stylistic analysis, Karno dialect, saying, blessing, wish, oath.*

**Citation:** Hovhannisyana R. Linguo-Stylistic Analysis of "The Tale of Davit the Lad and Khandoot the Lass" // "Scientific Works" of SCAS NAS RA, Gyumri, 2023. V. 1(26). 75-85 pp.

DOI: 10.52971/18294316-2023.26.1-75

## ЛИНГВО-СТИЛИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ "СКАЗАНИЯ О ДАВИДЕ МОЛОДЦЕ И ХАНДУТ ХАНУМ"

*Роза П. Оганнисян*

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

### Аннотация

**Предисловие:** В статье рассмотрены язык и стиль одной из ветвей эпоса «Сказание о Давиде молодце и Хандут ханум», формирование народного мироощущения и языкового мышле-

ния, словесного высказывания (вербологических единиц, пожеланий, благословений, проклятий, клятв), некоторые особенности системы визуализации. Оригинал сказания, пересказанного Давидом, жителем монастыря Апостола Фадея, и записанного Хачиком вардапет Дадяном, был опубликован в академическом издании. Рассматриваемый рассказ был впервые опубликован в 1895 году, в ноябрьском и декабрьском номерах журнала "Арагат"[3]. Методы и материалы: В работе использовались историко-сравнительный метод, а также методы сочетания и анализа специальной научной литературы и источников. Анализ: Лингво-стилистический анализ одной единой ветви эпоса свидетельствует о единстве устно-языкового мышления и воображения нашего народа, национальной психики /менталитета/ и характера. Результаты: В контексте вызовов сегодняшнего дня лингво-стилистическое изучение эпических сюжетов, в частности, интерпретация ключевых формул, безусловно, имеет современное значение, поскольку позволяет понять код армянской идентичности, делает узнаваемыми послы и систему ценностей народного эпоса. В 2012 году был опубликован один из пересказов эпоса, с новой диалектной версией, [6] перевод которой с ванского диалекта на гюмрийский говор каринского диалекта и запись были выполнены нами /-Р.О./ . В настоящей статье мы обратились к рассмотрению языка и стиля, особенностей устного творчества.

**Ключевые слова:** сказание, эпос, пересказ, стилистический анализ, диалект, формульное изречение, благословение, пожелание, проклятие, клятва.

**Как цитировать:** Оганнисян Р. Лингво-стилистический анализ «Сказания о Давиде молодце и Хандут Ханум». // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1(26). 75-85 сс. DOI: 10.52971/18294316-2023.26.1-75

**ՆՆՆՆՆՆՆ.** Ուսումնասիրության առարկա պատումն աչքի է ընկնում ժողովրդական լեզվամտածողության տարերքով, գործողությունների դինամիզմով, կերպարների հյութեղ լեզվամտածողությամբ, Կարնո բարբառի Գյումրու ենթախոսվածքի արագ տեմպով [2], նրան բնորոշ դարձվածային միավորներով ու ասույթաբանությամբ:

Մեր նպատակամիտումն է՝

ա) Արդի ժամանակների մարտահրավերների համատեքստում անդրադառնալ հայ արարչագիր էպոսի՝ բանավոր ավանդված վիպական մի տարբերակի՝ քննելով ու վերարժևորելով հայ լեզվի ու ոգու միասնականությունը:

բ/ Ըստ էության, հնամենի խոսքային ասույթը միտված է սահմանային ճգնաժամերի պահին հզորացնելու էթնոսի պաշտպանական մեխանիզմները՝ լուծելով գոյաբանական խնդիրներ ու դառնալով ազգի ինքնագիտակցության ու արժանապատվության ապացույց, ազգային բնավորության հասունության չափանիշ:

Հայ մտքի ստեղծարանական ակունքներում, անշուշտ, մեծ դեր ունի հայոց դյուցազնավեպը, որն իր պատումներով մեր ուղն ու ծուծն է դարձել, մեր նշանագիտական տիրույթը և վկայում է հայ մտածողության նախեղակ ձևերն ու մտքի տարածությունը պատմական ժամանակներից ի վեր:

**Պատումի լեզուն ու ոճը Կարնո բարբառի համապատկերում**

Ընդգծենք, որ մեր կողմից քննվող բանահյուսական պատումի շրջանակում շատ բառեր բարբառային երանգ են ձեռք բերել Կարնո բարբառի համապատասխան քերականական փոփոխությունների (հոլովում, խոնարհում)՝ *խանուսէն, ընձէն, յախէն,*

*օսկօն, լուս, մեկէն, քեզի, ընձի, կայնի, կերտանք, դրգէն, ինչպէս նաև հնչյունական-բարբառային ձևերի՝ գրլօխ, լուս, գօվագան, վարբէղ, ախպեր, մէր, արդյունքում: Հիշյալ բարբառում բաղաձայնական համակարգը քառաշարք է՝ ձ՝-ձ-ծ-ց, բ՛-բ-պ-փ, բառակերպում՝ հ ձայնեղի առկայությամբ: Անորոշ հոդը հետադաս է՝ Մէ մենձ **աստղըմ Մըսրէն յէլավ**... Օր զարգէց, մէ **գագըմ** բ՛ էրնէն կըդոսավ /6, էջ 83/: **Կագայիմ ծառըն ի նձ է, չէս կըդոէ**...*

Բացարձակորեն իշխում են բայի ներկա ժամանակի՝ Կարնո բարբառին (և առհասարակ արևմտյան բարբառներին) ներհատուկ համադրական ձևերը՝ **կըսէմ, կէղնի, գ՛ ուքա, գ՛ ընգնի և այլն**: Ստացականության կրկնակի արտահայտությունը ևս հատուկ է պատումի տեքստին, օրինակ՝ **Դու էղնիս քու աստվածդ, քու կամկըդ է** և այլն:

Անտարակույս, ազգային լեզվամտածողության վրա ազդեցություն են թողնում նաև այլալեզու մշակութային միջավայրերը, քանի որ մշակույթները ձևավորվում ու զարգանում են փոխադարձ շփումներով ու ներթափանցումներով, երկխոսությամբ միմյանց փոխանուցելով: Վկայաբերենք մի քանի օրինակ՝

ա) **Յէս ի նձ էնէմ, օր ընօր պատկերը տէսնիմ, // ընօր բ՛օյ-բ՛ ուսատը թամաշա էնէմ**: Պարսկերեն «թամաշա» նշանակում է «գրոսանք, տեսարան»: [1, էջ 148 ]

բ) **Մաղի քիտ-հ՛ անգաջը կըդոէց, // Նիզազի ձերը զարգէց**://Մնացած **դօշունը էս օր տէսավ, ցըրվավ: գ) Հըմը կը վախէնամ մուխանաթություն էնէս** /6, էջ 83/: դ/ Ժամանագրն օր **թըմնավ**, էդ պըզդի կընիզը պառգավ, էրէխա բերավ: [6, էջ 21] ե/ Հ՛իրան **բայլու** էր, օր Շուն Մէլիկը կէղնի թակավօր, Դավիտին կըզրգէ:

Ակներն է, որ քննվող պատումի լեզվական իրացումներում բավականին առատ է փոխառյալ բառերի գործածությունը, հատկապես արևելյան լեզուների՝ պարսկերենի, արաբերենի ու թուրքերենի ազդեցությամբ:

Բանավոր ավանդված պատումում հաճախ ածանցող հիմքը փոխառյալ բառ է /վախէնամ **մուխանաթություն** էնէս/, իսկ բառաքերականական ձևը՝ հայերեն, ինչպէս՝ Ըմբէս յէլավ, օր քըրդիկը էս ու էն **թարաֆէն** կըչոռար, **կամ՝ ուլիծով** անցան, ինչ **ռաստ էգավ**:// Դավիտը հարցրավ // Ըսիզ ի նձ է, ընիզ ինձ է: Պատահում է նաև, որ թե՛ հայերեն, թե՛ փոխառյալ արմատին ավելանում է փոխառյալ բառակազմական մասնիկ՝ նախածանց (օր.՝ Հ՛իրարէն **բ՛ էխարար** գ՛ էլնին լեռնանցկ /6, էջ 101/ **և այլն**):

Ուշագրավ է, որ Կարնո բարբառակիրների լեզվամտածողության դրսևորումներում, ժողովրդաբարբառային հարադրություններում ու դարձվածային միավորներում առկա են օտար բառանվանումներ ու արտահայտություններ, որոնք հաճախ դառնում են բարբառային բառերին համաձույլ՝ **Ղալաթ** էս էրէ: Էդ վօ՞ր **դուշմանըս** էր:

#### **Բանարվեստի առանձնահատկությունները**

Ըստ էության, խոսքային նմուշը հաճախ պատկերավոր է գործողությունների թվարկմամբ, որ հատուկ է բանավոր պատումների (նարատիվ) տեքստերի լեզվին: Ամեն դեպքում պատումի տեքստը յուրատիպ մտածողության համակարգ է, որտեղ **պոէտիկայի տարրերը** (պատկեր, մետաֆոր, առոգանություն և այլն) աճում են լեզվից: Կարող ենք ասել, որ բանարվեստի բոլոր տարրերը լեզվի արտաբխումներ են:

Լեզուն իր կիրարկողի ճակատագիրն է. պատմական բախտի մեծ վավերացումներն արտահայտվում են լեզվական իրողություններով կամ բանավոր (վերբալ) պատումներով: Կյանքի գեղարվեստականացումը՝ Կարնո բարբառի ուշագրավ դրսևորումներով, ըստ էության, մտքի ու զգայականի կենսուժի հաստատում է դառնում, իսկ տեղանունների հիշատակմամբ ուրվագծվում է պատմական կոլորիտային միջավայրը: Օրինակ՝ Կոէսաձոր՝ Կոէս գյուղ. գտնվում է Խոյ ավանում, Փեռա գյուղ. գտնվում է Հեր-Խոյ գավառում, Մարութա Բանձր Աստվածածին (այսպես է կոչվում Մասնա լեռների ամենաբարձր գագաթի՝ Մարաթուկի վրա շինված վանքը, որ Մասնա ժողովրդի ամենամեծ ուխտատեղին է) և այլն:

Պատումում բառը խիստ խաղացկուն է. ընդհանրապես ոճական բանադարձումներն այնքան համ ու հոտով են միահյուսվում, որ դառնում են բանաստեղծական ապրում-պատկեր: Ասույթային բանաձևերում բացահայտվող հարաբերությունների համակարգից բացի՝ կարևոր է տեքստն ըմբռնել որպես հատկանիշների ամբողջություն, այսինքն՝ լեզվական նշանների կապակցվածություն:

Հայոց դյուցազնավեպի առանցքային բանաձևերի մեկնաբանությունը, անշուշտ, ունի արդիական նշանակություն, քանի որ այն թույլ է տալիս հասկանալ մեր էության ծածկագիրը: Տարբեր պատումների և մեր կողմից քննվող պատումի մեջ ևս առանցքային ավանդական բանաձև է «Հացն ու գինի, Տեր կենտանի» արտահայտությունը. *Յա՛ հաց ու գինի, Տեր կենտանի. // Յա Մարութա բ՛արցըր Աստվածածին, Խաչ պատերազմին // Օր բ՛ազմավ մեր թևին* /6, էջ 83/: Երդման, առհասարակ աղոթքի մի բանաձև, որ կրկնվում է գլխավորապես Էպոսի Մշո տիպի պատումներում: «Հաց ու գինին» քրիստոնեական պատարագի հաղորդությունն է, իսկ «Տեր կենտանին» նույնն է, ինչ Աստված կենդանի՝ ի հակադրություն կուռքերի, որոնք անկենդան են:

Կարնո բարբառով խոսողների լեզվամտածողության ու բառակերտման առանձնահատկությունները, իրենց խոսքը գունազարդելու ու ճոխացնելու միջոցները առավելապես դրսևորվում են բանաձևային ասույթներում, որոնցից են՝ *Մէրը մանուզը ուրացել է: Կռիվներս կրողիվ է: Հող էիր, հող դառցընէմ* /6, էջ 44/, *Բւ գ՛ըլօխս տանօղը հըլը մօր փօրէն չի յէլէ:*

Բանաձևային ասույթները ձևավորված են ժողովրդական դարձվածաբանության յուրահատկություններով. դրանք մեծավ մասամբ համեմատության, փոխաբերության, մակդիրի պատկերավորման հնարներով ավանդական ասույթներ են՝ կարճ բանաձևումով ու ներփակ կաղապարով:

Ասույթային բանաձևերը՝ *օրհնանքներ ու բարեմաղթանքներ, երդումներ ու անեծքներ*, Էպոսում առավել հաճախադեպ կիրարկվող ժանրեր են, որոնք առօրյա-խոսակցական ոճում խոսքին հաղորդում են առանձնակի իմաստ ու գրավչություն, քանի որ հիշյալ ժանրերի հիմքում խոսքի հմայական գործության նկատմամբ ունեցած հավատն է: Խոսողը համոզված է, որ իր սրտի ցանկություն-փափազը խոսքի միջոցով հաղորդում է դիմացինին: Ցանկության այս բանաձևերն ի հայտ են բերում անեծքի ու օրհնանքի ժանրերի հնագույն արմատներն ու հայ ժողովրդի կենսամտածողությունը:

Ուշագրավ է, որ *կշտամբանքի խոսքերը* հաճախ արտահայտված են մեղմասու-

թյամբ, հատկապես եթե տարիքային բարձր խմբի ներկայացուցիչն է կշտամբում-հանդիմանում ջահելին. «Քու տունըդ չավիրվի, քու տունըդ չքանդվի. . . տունըդ շինվի» և այլն: Բհարկե, տեքստում հանդիպում են նաև անեծքի ժանրին մոտ պատկերավոր արտահայտություններ, որոնք իրադրական ծագում ունեն և այս ժանրի ավանդական կառույցից դուրս են, գործիչնակ՝ արտատեր պառավի հանդիմանություն-կշտամբանքը, երբ Դավիթը հողին հավասար է անում նրա արտը. -*Լանդբադ թակավորի նեղն ու աղեղը քու սիրողդ էղնի, //Օր էս օյինը խաղցել էս մեր գրլխին, //Օխտը ախճգա հ'աշկ ու ումուղ // Էս փշուր կորեզն էր /6, էջ 61/:* «Էս փշուր կորեզն էր» պատկերավոր արտահայտությունը նվազաբերության հնարով է:

Ընդգծենք, որ քննվող պատումի մեջ ջահելի շուրթերից կշտամբանքը հնչում է առանց մեղմասության, անխնա գույներով /6, էջ 61/- Դավիտն ըսավ. - *Պառա՛վ, քու բ'երանըդ ծըռվի, // Ընձի հ'ընձի՞ անիձիր:* Ասվածի հաստատումն է նաև Դավիթի և հալիվորի հարց ու պատասխանի զուգադրումը: Ի պատասխան Դավթի այն հարցին՝ Թե կըռնա՞մ՝ էս գորկը ցըրեմ, // չալիվորը թե՛ Քու տունըդ չավիրվի, // Յերգընկեն կըրագ թափի, չի կըռնա էդ գորկը ցըրե (առկա է նաև չափազանցություն) // Դու ի՞նձըդ բըղի ցըրես: // Դավիտը ըսավ. - *Չիերի բ'երնի կրագը քեզի վառե, բ'իձա՛:* /6, էջ 79/

Դրվագային որևէ հատվածի տեքստային քննությամբ անգամ ակներև է, որ լայն գործածություն ունեն համագործածական կամ միջոճական բառերը [էրագ, խօրուրտ, գորկ, վարած հող, արդատեր պառավ, վօրսատեղ, փայլեվան և այլն], որոնք, հանդես գալով ուղղակի կամ փոխաբերական իմաստներով, երբեմն ուշագրավ նրբերանգներ են հաղորդում խոսքին՝ ստանալով ոճական յուրահատուկ կիրառություն:

Պատումը գլխավորապես հյուսված է բարբառային և ժողովրդախոսակցական բառապաշարի հիմքի վրա: Ընդունելով բարբառային բառերի գործածության բաժանումն ըստ գավառաբանությունների ու հասարակաբանությունների՝ նշենք, որ վերջիններս գերակշռում են վիպական հյուսվածքում: Թերևս դրա շնորհիվ է, որ լեզուն հասկանալի է տարբեր բարբառներով խոսող մարդկանց:

Ընդգծենք, որ հայ գրական լեզվի և Կարնո բարբառի տարբերություններ կարելի է նկատել նաև բառերում, որոնք ընդհանրական չեն և սահմանափակվում են տարածքային գործածությամբ: Ուստի այդ կարգի բառերն առանձնացրել ենք իբրև գավառաբանություններ: Դրանցից են՝ *գօմփուլ* զարգեց /6, էջ 44 /, հըլը լեզուն էլ վառեց, դառցավ թըլիզ /6, էջ 39/, *բօխճա* /շորի կապոց/, *ալան-թալան* /ավարառություն/, *հավէս* /1. Փափագ, 2. լավ տրամադրություն, 3. եռանդ, *ուզընգան* /1. աղջիկ ուզող տղան, 2. Խնամախոս/, *հախե գալ* /1. պատժել, 2. գսպել, 3. խեղճացնել, *խօսկ-խօրատա* /խոսք ու զրույց/, *յախեն* /օձիքը/ ազատեց և այլն:

Մեր կողմից ուսումնասիրվող պատումում նկատելի են գռեհկաբանությունների որոշ տարրեր, թեև դրանք քիչ տոկոս են կազմում և նշված չեն ամբողջական բառերով: Խանդուտը թե. -Օխտը փայլեվան ընձի հըմար // Նստել են Նալբայժանի լեռնանցկի վըրեն, // Օր էգան, քեզի հախտեցին, ընձի առան, // Չէ՞ն ըսե՞ *դուս ընգաձ անառակ, // Մըսըրեն մե գլաղեմ էգավ, // Դուն քեզի ընօր գիրգը քըցիր:* /6, էջ 87/

Ծիսական մրցության մշակույթը, որ բնորոշ է հայկական հրաշապատում հեքիաթներին, առկա է նաև էպոսի՝ որպես հեքիաթ պատմված այս նմուշում, որտեղ ավանդական կենցաղն ու հարաբերությունները պատկերված են գրական կերպարների լեզվամտածողության ձևերով՝ ազատ ու շղթայապարծ խոհականությամբ: Ու երբ աղջիկ Խանդութը որոշում է փորձել Դավիթի ուժն ու զորությունը, «Կանճեց ըսավ. - Հէ՛յ-հէ՛յ տըղա Դավիտ, // Սօվօր էս գլաղա-գլուղի. // Պաղրաստվի, օր կըռիվնէրս կռիվ է»: Դավիտը կը մտածէ. «Տէսնի՛ս էս անատագին, ըսքան մարտ ջարտի, հերիկ չէղավ, // Հըմի էլ ըսօր է դէմըս դրգէ. ընձի է՛լ պէտկ չէ էղ դանջըղը»: /6, էջ 101/

Հեքիաթային, գերբնական կերպարների ու տարրերի դրսևորումը վիպական պատումը դարձնում է իրականի ու երևակայականի միահյուսում, որն արտահայտվում է պատկերավորման ուշագրավ միջոցներով. Մելիքը, երբ Դավիթին փորձում է չամիչով ու կրակով՝ «Աստու հըրամանօվ հըրէշտագը ձեռը վերցըրավ, դըրավ կրագին»: Վերերկրային ուժի վկայաբերում կա նաև հետևյալ օրինակում՝ Աստու հրամանով քամին կայնավ, կագալի ծառը շըռճավ: Կամ՝ Գիշերը Մհերը վեր թռավ ըսավ՝ դուք վօ՞վ էք: // Ըսավ՝ մէնկ Գապրիէլ հըրէշտագն ենք, // Պաղրաստվի, օր հօկիդ բըդի առնինք: // Յ՛էլավ ըսավ՝ ամա՛ն, Գ՛ապրիէլ հըրէշտագ: /6, էջ 23/

Այս դրվագը լիովին շնչում է ժողովրդական մտածողության բաբախով: Ուշագրավ է, որ հուզական դրամատիզմն արտահայտված է հոգնակիաթիվ հարց ու պատասխանով, որը վկայում է հոգիների հավատքի մասին:

Հաճախ գաղտնագրված է այս կամ այն միտքը կամ բառը, որը բացահայտվում է հետագա շարադրանքում. «Արի՛ քու ամանատդ տար»: Այս խոսքով Մհերը Գաբրիէլ հրէշտակին է դիմում և «ամանատ» ասելով՝ նկատի ունի նրա հոգին: Խոսքաշղթայի մեջ ակնբերն է այս իմաստը. «Մհերը հիվընդցավ, Գապրիէլ հըրէշտագը էգավ, հօկին տըվավ»:

Հեքիաթի լեզվին ու ոճական հնարանքներին բնորոշ արտահայտություններն առատ են, որոնք վկայում են, որ պատումը հյուսված է գեղարվեստական հնարանքի յուրատեսակ միջոցներով:

Հ. Օրբելին նշում է՝ էպոսի պատումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ասացողներն իրենք ժանրային սահմաններ չեն դրել հեքիաթի և էպոսի միջև: Դրա պատճառն այն է, որ ժանրային մի շարք հատկանիշներ ընդհանուր են թե՛ էպոսի, թե՛ հեքիաթի համար, և շատ ասացողների կողմից էլ ասվել են որպես հեքիաթ: /8, էջ 100/

Հեքիաթին բնորոշ դարձվածքների կամ լեզվական կայուն արտահայտությունների կիրառումը ևս հատուկ է ուսումնասիրվող պատումին /գօռբա թակավօր, նագիր-վեզիրն ընգան վօղկէրը, օխտը փայլէվան ունիր, օխտն էլ էկան, Դավիտը գարտնավ, տեսավ՝ հ իրա ձին էլ է տրաքելու պէս: Մէ փայլէվանըմ դըրգէց, // Էս փայլէվանը օխտը գագ յերգար էր /6, 53 էջ/ /չափազանցություն/:

Դավիտ քաշէց թուրը, ըսավ. Յա՛ Տէր Աստված. // գարգէց կագալի ծառին // Պանրի պէս կիսէց, անցավ: Կամ՝ Չիուն ըմբէս գարգէց, // Կրագի պէս գօրկն ու վրանը վօղի տագ տըվավ /6, էջ 97/ /համեմատություն/:

**Փաղաքշանքի խոսքերը և օրհնանք-բանաձևերը** միտված են հերոսների գործնդեղ ուժի պահպանմանը. *Դավի՛տ, վերնինք քեզի: Հ՛արեվիդ մաղաղ. /6, էջ 48 /, Քեռին ըսավ՝ մաղաղորդ էղնիս, ընիզ ուլ չէ: // Դուն էղնիս քու աստվածդ, // Ընձի 40 օր ծամանա՛ց տուր և այլն:*

**Կրկնաբերությունը**, որի տարատեսակներն են նույնասկիզբը, նույնավերջը, հանգույցը և կցուրդը, առավել հաստու է դարձնում ասելիքն ու արտահայտչականությունը՝ գործիմասկ՝

*Մէլիկը ճվաց, ըսավ՝ Արբ՛, արբ՛, հօղ էիր, հօղ դառցրնէմ /6, էջ 83/*

*Օխտը օր՝ գիշեր ու ցերեզ երկեց Խանդուտ խանումին, գօվաց ու գօվաց. /6, էջ 87/*

**Նույնասկիզբ** /հարակրկնություն/-

*Էդ արդատէր պառավը օխտը ախճըգա տէր էր,*

*Օխտին էլ մարտու էր տրվել,*

*Օխտըն էլ օրփեվերի էին:/6, էջ 61/*

Կամ՝ *Մէլիկն ըսավ՝ զրնա՛, ըդոնց քեռանցն ըսա՛*

*Կա՛ւ Դավիտի գրլօխը,*

*Կա՛ւ քառուն կուս ախճիզ դրրգէն Մըսըր /6, էջ 69/ /Նույնասկիզբ պայման/:*

*Ինձ ռաստ էգավ՝ տավար, գօւէջ, ձի,*

*Դավիտը հարցրավ՝ ըսիզ ի՛նձ է: ընիզ ի՛նձ է:/6, էջ 33/*

**Կցուրդ**. չափածո խոսքում բանաստեղծական տողի վերջին բառը /հնչյունախումբը, բառակապակցությունը/ կրկնվում է հաջորդ տողի սկզբում, իսկ արձակ խոսքում նախադասության վերջին բառը կրկնվում է հաջորդ նախադասության սկզբում. [4, էջ 40]

*Օր ձեռը մրդցրրավ կրագի մէճը, վառավ,*

*Օր վառավ՝ մրդցրրավ բ՛երանը, լաց էղավ.*

*Օր լաց էղավ. նագիր-վեզիրը կայնան*

*Թէ՛ թագավօրն աքրաձ կէնա,*

*Տեսար, օր ըսիզ էրէխա է, խէկը չի կըդռէ:/6, էջ 39/*

Կցուրդի ուշագրավ օրինակ է հետևյալը.

- *Փախավ ախճիզ Խանդուտը,*

*Տղա Դավիտը հէդէվէն հ՛ընգավ.*

*Հ՛ընգավ հէդէվէն.*

*Դավիտի ձիու պօճէն կաքաձ գուրգը*

*Տէլ յէսօր գէդինը պաղռէլօվ կէրտա /6, էջ 103/:*

Տեքստում բազմաթիվ են նաև շրջադասության և աստիճանավորման պատկերավորման հնարները:

**Բարձրացող աստիճանավորման** հնարով մոտիմաստ բառերը հաճախ գուգադրվում են՝ խոսքի բովանդակությունն ուժեղացնելու կամ թուլացնելու համար: Վկայաբերենք բարձրացող աստիճանավորման օրինակ, երբ յուրաքանչյուր հաջորդ բառը /բառակապակցությունը ավելի հազեցած է իմաստով, ավելի ուժգին ու արտահայտիչ է, քան նախորդը [4, էջեր 26-27]: *Քառուն կուս ախճիզ են հավակէլ, // Իմ մինուճար ախ-*

*ճիգն էլ հեղը // Էնդի գու լամ, կը մըղգըտամ /6, էջ 54/: Փայլեվաններն օր լըսին, թէ Խանդուրտ խանումին ըսիզ բրդի առնէ // Հէրսողան, դիվողան, ըսին՝ Մըսրրէն մէ գյաղա տղէմ գա, // Խանդուրտ խանումին առնէ. // Վայել չէ մէզի /6, էջ 93/:*

Պատումի լեզվին բնորոշ են հայկական ժողովրդական հեքիաթներում առավելապես կիրառվող այն դարձվածքներն ու չափազանցությունները, որոնք ունեն թվային խորհրդանշական իմաստ, օր.՝ *Օխոր օր, օխոր գիշեր էդ քաղթի մէճը քէֆ-ուրախություն էղավ:* Կամ՝ *Թէ օր հըմի քացիմ զարգեմ, էրգուսն էլ քառսուն գազ կէրտան գէղնի տագը: 40 օանդակ բէ՛ղի վըրես /6, էջ 83/*

Ուշագրավ է բառերի ձևաիմաստային խմբերի կիրառությունը՝ հատկապես հականիշների ու հոմանիշների համատեղ գործածությունը: Օրինակ՝ *Մէլիկի վէզիրներն ըսին՝ Դավի՛տ, վէր՛ աստված, ցածը՛ դուն, // Մէզի չը ջարտէս: Մէ մէնձ աստղըմ Մըսրէն յէլավ, / Մէ պըզդի աստղըմ էլ՝ Սասունէն, / Էգան, զարգին յիրար: // Տէսավ, օր էս պըզդի աստղը մէնձ աստղդին հախտէց: /6, էջ 83/*

Մի այլ նախադասության մեջ *պըզդիզ* բառի հականիշային իմաստն արտահայտվում է շատ բառով՝ «Սասունը յինքը պըզդիզ է, բայց ուժը շատ է»: Դավիտը աշեց, տէսավ՝ հերը Մէլիկի թևին գիր է գրէ. «Ըսիզ՝ Դավիտի մէնձ ախպեր, Դավիտ ընօր՝ փօրքը ախպեր» /6, էջ 83/: (Այս դրվագը գրի մի առանձին գաղտնակարգ է՝ մսե հմայիլի մոտիվին զուգահեռ):

Լեզվաոճական առումով նրբագեղ պատկեր է, երբ Դավիթը «*Թաշգինագըմ գորձէլ տըվավ, սըրդի մէճը ինձ կար-չկար, վըրէն գըրէց, // Թաշգինագն էլ նըվէրնէրով ծաղ-գըցըրավ, // Մշուղի հէղ ճամպիէց Քիլիսէ՛ Խանդուրտ խանումի քօվ*» /6, էջ 87/: Գիր-նշաններով թաշկինակագրույցը հեքիաթի մոտիվներից է ու սրտի պատգամ՝ ուղղված ցանկալի կամ որոնելի կնոջը:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** «Տղա Դավիթ» միաձյուղ պատումի վիպական առաջընթացի ստեղծագործական հիմքը լեզվական տարերքն է: Տեքստային իրացումներում բարբառային բառերի գերակայությամբ հեքիաթին կամ էպոսին հատուկ երանգ է հաղորդվում: Համագործածական, ժողովրդախոսակցական, բարբառային ու օտար բառերը պատումի խոսքարվեստում հոգեվիճակի, տրամադրության, հույզի ու ապրումի արտացոլման, նաև իրադրական միջավայրի ստեղծման լեզվաոճական հնարներ են:

Արարչագիր էպոսում գաղտնագրված են արքետիպային մտածողության դրսևորումները, էպոսը մարդկության փորձն է կամ նախեղակ փորձի մասին ինչ-որ պատկերացում, այն մտքի տարածություն է տիեզերական հարցադրումների համապատկերում: Անտարակույս, դյուցազնավեպի նախնական ուժականության փորձընկալումը մեզ վերստին մոտեցնում է մեր ակունքներին:

Մրանով հանդերձ՝ էպիկական պատումների լեզվաոճական քննությունը, մասնավորապես՝ առանցքային բանաձևերի մեկնաբանությունը, անշուշտ, ունի արդիական նշանակություն, քանի որ այն թույլ է տալիս հասկանալ հայի էության ծածկագիրը: Ազգային վեպն այսօր էլ մնում է համազգային մտածողության և բնավորության վերածնության գործություն:

Բացահայտել ենք Կարնո բարբառի՝ որպես լեզվի տարածքային տարբերակի դրսևորման որոշ առանձնահատկություններ ու բնորոշ գծեր վիպական բանահյուսության տեքստում, վեր ենք հանել այն դարձվածային արտահայտություններն ու ավանդական խոսքային բանաձևերը, որոնք առկա են էպոսի՝ մեր կողմից քննվող տարբերակում՝ ցույց տալով Կարնո բարբառը կրողների աշխարհընկալման առանձնահատկությունները, մտքի կենսունակությունը, բանավոր մշակույթի արքետիպային բնույթը ժամանակի ծիրում:

**Գրականություն**

1. Անառյան Հր. Հայերեն արմատական բառարան /ՀԱԲ/, հ. 2, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1926 թ.: 149 էջ :
2. Գրիգորյան Գ. Բերդի և Գյումրու ենթախոսվածքների տեմպի ուսումնասիրություն // Գիտական հոդվածների ժողովածու: Երևան: 2017: 203 էջ :
3. Դատեան Խաչիկ վարդապետ, Տղայ Դավթի եւ Աղջիկ Խանդուդի հեքիաթ / Արարատ, ԻԸ տարի (1895), թիւ ԺԱ, Էջմիածին, էջ 423-430, ինչպես նաև՝ Դատեան Խաչիկ վարդապետ, Տղայ Դավթի եւ Աղջիկ Խանդուդի հեքիաթ (շարունակություն) / Արարատ, ԻԸ տարի (1895), թիւ ԺԲ, Էջմիածին, էջ 476-479):
4. Չաքարյան Հ., Ավետիսյան Յու.Ոճագիտություն, տեքստագիտություն, հայոց լեզվի պատմություն: Երևան: «Չանգակ» հրատ.: 2018: 292 էջ :
5. «Սասնա ծռերը»՝ հայ գոյի բանաձև, Աշակերտական հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2022, 124 էջ:
6. Սարգսյան Ա, Պատում «Տղա Դավթի և աղջիկ Խանդուդի հեքիաթը» (Կարնո բարբառի Գյումրու խոսվածք փոխադրումը և գրչագրումը՝ Ռ. Հովհաննիսյանի): Երևան: Փրինթինֆո: 2012: 112 էջ:
7. Տղա Դավիթ, ԺԴ պատում / Սասնա ծռեր, Բ հատոր, մաս 2-րդ, Ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս Մ. Աբեղյանի, Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 318-350:
8. Օրբելի Հ. Հայկական հերոսական էպոսը: Երևան: 1959թ.:

**References**

1. Acharian Hr. Armenian root dictionary [Hayeren armatakan barraran] /HAB/, no. 2, Yerevan University Press, Yerevan, 1926, 149 p., (in Armenian)
2. Grigoryan G. Study of the tempo of sub-discourses of Berdi and Gyumri [Berdi yev Gyumru yent'akhosvatsk'neri tempi usumnasirut'yun] / A collection of scientific articles. Yerevan. 2017, 203 p. (in Armenian)
3. Reverend Datean Khachik, The Tale of Davit the Lad and Khandoot the Lass [Datean Khach'ik vardapet, Tghay Dawt'i yev Aghjik Khandut'i hek'iat']/ Ararat, 1895, No. ZA, Etchmiadzin, pp. 423-430, as well as: Reverend Datean Khachik, The Tale of Davit the Lad and Khandoot the Lass (continuation) / Ararat, Year 1895. No. ZB, Etchmiadzin, pp. 476-479). (in Armenian)
4. Zakaryan H., Avetisyan Yu. Stylistics, textual studies, history of the Armenian language [Vochagitut'yun, ek'stagitut'yun, hayots' lezvi patmut'yun]. Yerevan. "Zangak" publ. 2018. 292 p. (in Armenian)
5. "Sasna Tsrerer": formula of Armenian existence[«Sasna tsrery» hay goyi banadzev], Proceedings of the Student Republican Conference, Gyumri, 2022, 124 p., (in Armenian)

6. Sargsyan A. The Tale of Davit the Lad and Khandoth the Lass [*Patum «Tgha Davt'i yev aghjik Khandut'i hek'iat'y*]. Yerevan, Printinfo. 2012. 112 p. (in Armenian)
7. Tgha Davit, ZD patum / Sasna tsrer, [Tgha Davit', ZD patum / Sasna tsrer, ]volume B, part 2, edited by Academician M. Abeghyan, Yerevan, Haypethrat, 1951, 318-350pp. (in Armenian)
8. Orbeli H. The Armenian heroic epic [*Haykakan herosakan eposy*]. Yerevan. 1959. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: 29.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 26.04.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Ռոզա Պողոսի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝** ԳԱԱ Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,  
էլ. հասցե՝ vard-rosa@mail.ru , <https://orcid.org/0009-0009-7553-7797>

**Roza Pogos HOVHANNISYAN:** Researcher at Shirak  
Center for Armenological Studies NAS RA., Gyumri, RA,  
e-mail: vard-rosa@mail.ru, <https://orcid.org/0009-0009-7553-7797>

**Роза Погосовна ОГАННИСЯН:** научный сотрудник Ширакского  
центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА,  
эл.адрес: vard-rosa@mail.ru <https://orcid.org/0009-0009-7553-7797>